

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ր Ա Ր Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 18

25 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուսակցությունները (ԽՄԲԱԳՐԱԿԱՆ) : — Առուստուր քե բարիք. ՅՈՎ.Է. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ : — Արձալկ
ներբուածներ. «Զաւակ» — «Նաւակը». ԶԱՊԷԼ ՆՍԱՅԵԱՆ : — Հակալոյական պայքարը
(Ներկուրդ յօղուած) ԲԻԷՆԻ ԱԲԷՆԻ : — Ներկու սրբեղ. «Իրիկուան դեմ» — «Նոպաները».
ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՅԱՆ : — Մեր եկեղեցական նկարչութիւնը. Տ. Կ. ԶԷՕԿԻՐԵԱՆ : — Դպրո-
ցական հանդեսներ : — Զանազանք :

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի շարեկան հրատարակողը Կ. Պոլսոյ համար հառտուն դրօ.
Եւ գաւառներուն համար յիսուն դրօ. իր վնասելի : Արտասահման՝ 12 Ֆրանք կամ
5 րուպի : Թղթասարական ծախքը նմաբար էրան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւնը չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ անսու :
Չի հրատարակուած ձեռագրութիւնները եւ չի դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-
մաններով :

Զեմբէ ԿԲ ԾԱԽՅԻԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՅԻ
Հասցէ


درعليه ده غلطه ده (ماتيس) غزتي سي اداره سي

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ
Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

ԱՋԴՈՒ ՄԻՋՆԱՍՏՊՄԱՆ ՓՈՅԻ ՓԼՏՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԱՋԴ ՄԸ

Կ'ուզե՛ք հանգիստ ու մրցիկ-մրցիկ կնանալ ու ազատիլ սա աճերես միջատներուն տուած չարչարաններէն. ԴԻՄԵՑԷՔ ՈՒՂՂԱԿԻ



ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

Մահմուտ Փաւա Պաշի, պօղաչանիին դէմ,
թիւ 261

ուր պիտի գտնէք թարմ եւ տաաջին տեսակէն խիստ ազգու Տաւաղեայի միակ միջատաւան փայի, որ վարկենապէս կ'ապանէ ու կ'օջ'չացնէ մլուկը լուն (փրէ), ոջիլը, հանճը, մծեղը (օրվրիտնէք). ուսինը (հիւվի), բըրբըրը, ցոտնի-ու-սիչը եւ ուրիշ բնի մը զլուսակար միջատներ ու ճճիներ. այն փայիները մեծ ու պզտիկ մտանուար տուփերու մէջ դրուած պատրաստ կը ծախուին: Ուստի մտէն տնոնք որոնք պէտք ունին ազգու միջատաւան փայիի եւ կ'ուզեն գիշերները տնուշիկ-տնուշիկ քնա-նալ եւ տաղջութիւննին չը խանգարուած արթնել, թող հոճին դիմել դեղորանս գնեալով առաջ մը փայի. քանի որ այս տեսակ պէտք մը գտնացնելու համար դեղորանս ունի իր դիւրութիւնը՝ Պաւսոյ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելովը: Աւելորդ նկատած չենք ըլլար հոս տնքում մը եւս յիշեցնելու թէ՛ Դեղորանս որ Պաւ. հասարակութեան շը-տարին քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացու իր ուղղամիտ գործու-նէութեամբը միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թարմութեամբ, դեղագրե-րու արագ եւ ճշգրտաւ պատրաստութեամբ, գիներու չափուարութեամբ եւ որ աւելին է արուեստին խղճամիտ գործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր ազնիւ յոճախորդները:

Դեղորանս նաեւ Եւրոպական տան մը հետ ալ բանակցած ըլլալով մտէն շարթու Զուր-ցերի-կան թարմ պատուտոտի քիւպեր (այլ գալէ-ի) կը հասնին բոսթալով եւ գաւառա-լին յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Յիշելք նաեւ մտէն որ Դեղորանս յոճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն մասնաւո-րաբար ծանօթ ԲԺՐՇԿ ԱԼԼԱՀՎԷՐՏԻ ԷՅ. որ մտէն Գ. Ե. Շը. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իր ծանօթ փորձառութեամբ եւ մասնագէտութեամբը դեղորանիս մասնաւոր դարմանասրահը:

Ահա մասամբ մը պարզելով Դեղորանի ներկայ վիճակը, կը յուսանք թէ արդոյ յո-ճախորդները ինչպէս ցարդ, յետ այսու եւս միշտ պիտի շարունակեն իրենց վստահութիւնը Դեղորանի նկատմամբ, եւ փոխանակ հեռուար տեղեր դիմելու՝ ուղղակի պիտի այցելեն Դեղորանս, ուր մտէն տեսակ դիւրութիւններ պիտի ընծայուին իրենց կատարելապէս գոհ թողելու համար, քանի որ Դեղորանիս սկզբունքը եղած է ՈՒՂՂՈՒԹԻՒՆ:

ԴԵՂԱՐԱՆՍ ՈՒՆԻ ՆԱԵՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ. 5—10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՕԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապանովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապանովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՂՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեալ համեմատու
թիւնն է 74%⁰. որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի ամէնէն նշանաւոր
դրամատէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի
Լիոնէի վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ՄԱՐՔԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրամադրամիք ընկերութեան վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻՂԶԵՄ, նաեպիս գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Բաթրճոզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն անելու համար դիմի Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՕԹ.— Շահաւոր դիւր պիտի տրուի այն ֆննիչին որ կարելու արգիւնք մը ի
ագործած թլլայ անձնապէս: 8—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ճեսակ քօհաֆիլի ապրանց

Մեծ-Շուկայ, Քիւրքմիներու դրան կեց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր
հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլ-
թան-Համաժ, Միախլի Դրամատան դէմ
Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիլի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տակաւնութիւն, եւ դիւրամատ-
չիլի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Արամ վարդեան մեծապէս գոհ
թողուած է իր բազմաթիւ յաջաբարքները:

պէտք է որ Շուկայ ելլող ամէն ընտանիք
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

8—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ
զատ, մասնագիտորաբ եւ երկար տարիներէ
ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղեաց,
միզային ճանապարհու հիւանդութիւնները,
լղային տկարութիւնները, հին եւ նոր գա-
ղիական ախտերը, Սյո վերջին ախտերը՝ ա-
ռանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն
մեթամերով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ
վերջէ: Զարնըլարթի օրերը միայն ձգէ: 8—10

ԲՈՒՐ ԵՐԱԽԱՅՔ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ

Եօիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանդատութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



Շեշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

SCOTT'S EMULSION

որնոր ակոյայ հանած ատենին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ շանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԸԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները առողջ և զորաւոր մեծնան շնորհիւ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԸԳՐՈՒԹԻՈՒՆ:

Բաւր բեղաբերածիւրը և բեղաբերածիւրը եւ ծախն:

ՑԱՍԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ . ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒՅԻՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԸ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թուակի ճիւղեր
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ և թէ՛ առանց բժշկական քննութեան
DE Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններուն վճարումները շտաբական մասնավճարներով տեղի կունենան,
BERLIN սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին արտոնականութեան և ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պահրա
 և Բրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԷՄ ԴԱԼՅԱՅԵԱՆ

Պոլիս Քաթրճեքոյլու խան

ԱՄԱՆԻՆ

ԿՈՒՍԱԿՐՕՆՆԵՐԸ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Դուրեան Արբազան որ Արմաշի nostalgien ունի, գնաց անդամ մըն ալ ողջունել իր Չարխափանը ու Դպրեվանքը, և այսօր-վաղը Իզմիր կը վերադառնայ՝ իր առաջնորդական պաշտօնին գլուխը անցնելու: Իր կարճատև բացակայութիւնը թերևս այնքան զգալի չեղաւ Իզմիրի մէջ, — ուր Առաջնորդարանի գործերն ալ ամրան տապերուն ազդեցութիւնը կը կրեն, տեսակ մը saison morteի մէջ գտնուելով՝ ժողովականներէն շատին օգափոխութեան երթալուն ու արձակուրդներու պատճառաւ, — որքան ուշագրաւ եղաւ իր վերերեւումը Արմաշի մենաստանին մէջ ուր գուրգուրանքով ընդունեցին զինքը միաբանութիւն, ուսուցչական մարմին և սաները:

Այսուհետև է միայն որ Դպրեվանքին նախորդ վերատեսուչը բոլորանուէր պիտի փարի իր առաջնորդութեան, այլևս հանդարտ մտքով ու գոհունակ սրտով վարելով իր հովուական ու վարչական գործերը, որոնցմով որքան ալ խզճմտօրէն կը դադարէր իր Իզմիր ժամանման առաջին օրէն իսկ, բայց միշտ ձգողական բան մը, թերի մը լրացնելու և բաղձանք մը կատարելու պէտքը կը քաշէր զինքը զէպի Արմաշ. այդ թերին ու այդ բաղձանքն էին՝ իր չորս շրջանաւարտ սաներուն վարդապետական ձեռնադրութիւնը զորս ինք իր ձեռքով կատարելը ուխտի մը չափ նուիրական կը նկատէր իրեն համար: Այդ ուխտը և այդ ձեռնադրութիւնը կատարուած են հիմակ, եւ Դուրեան Արբա-

զան հոգեկան հրճուանքով մըն էր որ կրօնական սքեմը ու վեղարը տուաւ չորս երիտասարդ և ուսեալ սարկաւազներուն, — վերջին պտուղները իր տեսչութեան և ուսուցչապետութեան շրջանին, Արմաշի մէջ:

Օրաթերթերը նկարագրեցին արդէն՝ Տօն կաթողիկէի կիրակին Չարխափանի կամարներուն տակ կատարուած արարողութիւնը, խորագրեցիկ հանդիսաւորութեամբ մը որ կը նուիրագործէր չորս ազուամագ աբեղաներու կուսակրօնութիւն ընդունիլը, ինքնակամ հրաժարումով աշխարհիկ կեանքէն, — ինչ որ պզտիկ զոհողութիւն չէ, Հո'ն էին՝ Դպրեվանքին նախորդ սաներէն ոմանք, այժմ վարդապետ, քահանաներ՝ շրջականներէն, և սակաւաթիւ ուխտաւորներ ալ: Վանական հիւրընկալութիւնը ինքնայատուկ հրապոյր մը ունի միշտ իր պարզութեանը մէջ, ու ո'չ մէկ ուղեւոր՝ ո'ւր որ ալ ճամբորդէ և ի'նչ ընդունելութիւն ալ գտնէ՝ չի կրեր հոգեկան հեշտալի տպաւորութիւնը վանք իջեւանող ուխտաւորին, որ իրիկնամուտին, յոգնած դադրած կը հասնի մենաստան մը և կ'առաջնորդուի վանական պարզուկ խցիկը՝ ուր քիչ մը հանգիստէ յետոյ կը հրաւիրուի թանապուրի սեղանին, և արչալոյսին եկեղեցի կը վազէ՝ այլևս անոր միջնորդին մէջ ապրելու համար, հեռու քաղքի ժխորէն ու առօրեայ տաղտուկներէն, որքան ատեն որ բնակի վանքին մէջ: Այս տպաւորութեամբ համակուեցան անուշտ ամէն անոնք որ յուսիս 18ի շարաթ իրիկունը Արմաշ ժամանեցին:

վերջին բլուրին ծայրէն լսելով տաճարին
զանգակը որուն արձագանգները կը համին
հեռուն, և կէս-մութին մէջէն նշմարելով
ուրուագիծը Դպրեվանքի շէնքերուն որոնք
կը ցցուին իրենց հանդէպ:

* *

Բայց թողլով ուխտաւորական այս տպա-
ւորութիւնները, Մասիսի ընթերցողներուն
ներկայացնենք նորընծայ չորս վարդապետ-
ները:

Հայկ սարկաւազ Դանիէլեան, Խասգիւղցի,
ծնած 1881ին, նախնական կրթութիւնն ա-
ռած Խասգիւղի Ներսէսեան վարժարանը,
1895ին Գերմանիա կ'երթայ Վիլհէլմստորֆի
դպրանոցը, ուր կը մնայ 9 ամիս: Հայկ սար-
կաւազ կոչուեցաւ Տէր Պարգեւ: Արշաւիր
սարկաւազ Սահակեան, Շապին Գարահի-
սարցի, ծնած 1881ին, նախնական կրթու-
թիւնը կըստանայ տեղւոյն Ս. Փրկչեան վար-
ժարանը եւ յետոյ Կիրասոնի ազգ. վարժա-
րանին մէջ: Կոչուեցաւ Տէր Շաւարշ: Անու-
շաւան սարկաւազ Համբարձումեան, Գուրտ-
պէլէնցի (վիճակ Նիկոմիդիոյ), ծնած 1882ին,
նախնական կրթութիւնը կըստանայ զիւղին
վարժարանը. կոչուեցաւ Տ. Պսակ: Հմայեակ
սարկաւազ, Այնթապցի, ծնած 1888ին.
նախնական կրթութիւնն առած քաղաքին
Վարդանեան վարժարանին մէջ եւ երեք
տարի ամերիկեան գոլէժը: Կոչուեցաւ Տէր
Շահէ: Ասոնք Դպրեվանք մտած են 1899ին:
1902 Սեպտ. 8ին սարկաւազ ձեռնադրուած
են Դուրեան Սրբազանէ: Տէր Պարգեւի Թէշն
է «Ուղղափառութիւն Հայ Եկեղեցւոյ», Տէր
Շաւարշին՝ «Յարաբերութիւնք Հայ Եկեղեց-
ւոյ ընդ այլ Եկեղեցիս», Տէր Պսակին «Կա-
նոն Սուրբ Գրոց ըստ Հայ Եկեղեցւոյ»: Տէր
Շահէին՝ «Ընդիր մի բնութեան եւ երկուց
բնութեանց՝ ըստ վարդապետութեան Հայ
Եկեղեցւոյ»: Ասոնցմէ զատ չորսն ալ միեւ-
նոյն ատեն զրած են կրօնական դաստիարա-
կութեան վրայ ուսումնասիրութիւն մը: Իսկ
իւրաքանչիւրը պիտի գրէ վարդապետական
գաւազանի արժանանալու համար ուսումնա-
սիրութիւններ մատենադրական նիւթերու
վրայ. Տ. Պարգեւ՝ Դաղար Փարպեցւոյ վրայ, Տ.
Շաւարշ՝ Թովմա Արժրունւոյ վրայ, Տ.
Պսակ՝ Սեբէոս պատմագրի վրայ, Տ. Շահէ՝

Փաւոտոս Բիւզանդացւոց վրայ: Ամբողջ
զբարար ընագիրը աշխարհաբարի պիտի
թարգմանեն, պիտի ծանօթաբանեն եւ ներա-
ծութիւն մը պիտի գրեն հեղինակին անձին
եւ զրքին բանասիրական խնդիրներուն վրայ:
Ինչպէս կը տեսնուի, այս չորս կուսակը-
րօնները ուսման ու գիտութեան լուրջ պա-
շարով մըն է որ կը թեւակոխեն եկեղեցա-
կան ասպարէզը ուր գործնական կեանքը,
հոգեւոր հովութիւն, քարոզչութիւն, պիտի
օժտեն զիրենք առաւելութիւններով զորս
վանական մթնոլորտի մէջ կարելի չէ ձեռք
բերել կատարելագոյն: Դուրեան Սրբազանի
հարազատ աշակերտները պիտի ըլլան անոնք,
լուրջ, ծանրախոհ, գրչի և խօսքի տէր, աշ-
խատելով բարձրացնել Դպրեվանքին կրօնա-
յին—բարոյական վարկը ո՛ւր և ի՛նչ պաշտօնի
որ կոչուին, նպաստելով, ի մէջ այլոց, տեւա-
կան դարձնելու այդ Հաստատութեան պէտք
ունեցած ընդհանուր համակրանքը որ իրական
արդիւնքներու պէտք ունի միշտ, ինչպէս էր
ներկայ վարդապետական ձեռնադրութիւնը:

ԵՐՈՒՍՅԱԿՆԵՐԻ ՀՍՇԻՒՆՆԵՐԸ

Պառն ժողովը իր վերջին նիստին մէջ
տեղեկանալով որ Երուսաղեմի վանքապատ-
կան հաշուաց Քննիչ Յանձնախումբը Ս.
Պատրիարք Հօր կողմէ երեք անգամ ի նիստ
հրաւիրուելէ ետքը՝ անհնար եղած է զայն
գումարել, կազմալուծեալ համարեց զայն.
և նկատելով որ նոր Յանձնախումբի մը կազ-
մութիւնը եթէ ոչ անհնար՝ գէթ ժամանակի
կը կարօտի, հարկ դատեց Վարչական Մաս-
նախումբ մը կազմել իր մէջէն եւ Տնտեսական
Խորհուրդէն, անմիջապէս հաշիւներու քննու-
թեան ձեռնարկու եւ արդիւնքը տեղեկադ-
րելու համար: Հետեւաբար, սոյն մասնա-
խումբի անդամ ընտրեց, Քաղ. ժողովին
Գրիգոր Խտրեան, Միհրան Սեթեան և Սեպուհ
Տէմիրճիպաշեան էֆ.ները, իսկ Տնտես. Խոր-
հուրդին՝ Գէորգ Ասլանեան և Վահան Սու-
րէնեան էֆ.ները:

Սոյն նորակազմ հաշուեքննիչ Մասնա-
խումբը հրաւիրուած է իր առաջին նիստը
գումարելու յառաջիկայ երեքշաբթի, Ազգ.
Պատրիարքարանի մէջ:

ԱՌՈՒՏՈՒՐ Ի ԲԱՐԻՔ

ՆՈՒՆՅԱՆ, 18 ՅՈՒՆԻՍ, 1905

Յարգոյ խմբագիր Մասիսի

Նախ շնորհակալութիւններս կը յայտնեմ անխորաբար՝ ամէն հոյ թերթերու՝ որոնք յոյժ սիրալիր ընդունելութիւն մը ըրին Ալքոլամոլութեան դէմ բացուած պայքարին, ոչ միայն առաջարկութիւնս հիւրընկալելով իրենց թերթերուն մէջ՝ այլ և նմազարկաններով ալ պաշտպանեցին դատը և լայնօրէն բացին իրենց սիւնակները այսպիսի գրութեանց: Սպասածէս շատ աւելի աղէկ ընդունելութիւն գտաւ առաջարկութիւնս՝ որու համար գոհ և ուրախ մնալս ամենայն սիրով և երախտագիտութեամբ ինչպէս և ամենայն պարզութեամբ այսպէս հրապարակաւ կը յայտնեմ: Այնպէս որ, ցայսօր ձեռք ձգուած օգուտը՝ արդէն իմ համեստ ակընկալութիւններս գերադանցեց. ասկից աւելի եթէ դեռ օգուտներ ծնին այս խնդրոյն առթիւ գրուելիքներէն, ատի ալ «ճապա» պիտի նկատեմ: Անձիս շտապուած գովեստներուն համար ևս շնորհակալութիւնս կը յայտնեմ հաւասարապէս ամէն թերթի Տնօրէններուն, և այս՝ ամենայն անկեղծութեամբ, խնդրելով իրենցմէ այս անգամ նոր շնորհ մը, այսինքն թէ՛ գոնէ քիչ մը ատեն թողուն իմ անունս այս գործին կցելէ, որպէս զի մարդը մոռցուի և այսպէսով բուն խնդրոյն վրայ միայն կեդրոնացուի ամեն ուշադրութիւն: Նաև դիւրին է երեւակայել որ, շատ հաճելի չի պիտի ըլլայ ինձ համար՝ մրցանակ ստացած և ի նորոյ հրատարակուած տեսնել յօդուած մը որու մէջ անունս գտնուի: Ասկէց զատ, կը վախնամ որ այժմ անունս ոմանց այնքան անախորժ հնչել սկսած է որ, զայն պարունակող յօդուած մը թերևս միայն այդ պատճառաւ չի կարդացուելու դադապարտուի, գոնէ այնպիսի անձանց կողմէ՝ որոնց համար մասնաւորապէս գրուած են անոնք:

Հետզհետէ ստացած թերթերուս պարունակած յղքոլամոլութեան դէմ գրուած յօդուածներուն (ըլլայ մրցման դրուածներուն),

ըլլայ մրցման չի դրուածներուն) մէջ կը տեսնեմ որ այնպիսի օգտակար և կարեւոր պարբերութիւններ կան՝ որոնց կրկնութիւնը փափաքելի է և նպատակայարմար, թէև անոնց ամբողջութիւնը մրցանակի չարժանանայ թերևս, և անշուշտ շատեր դուրս պիտի մնան՝ պարզապէս միայն 12 հատին մրցանակ սահմանուած ըլլալուն համար: Արդ, մրցանակէ դուրս թողուած յօդուածներէն այսպիսի մասերու (որոնց ընթերցումը մասնաւորապէս օգտակար կը նկատուի) հաւաքածոյ մը պիտի պատրաստուի և զրկուի Մասիսի, հրատարակութեան համար, ուրկից զայն արտատպող Թուրքիոյ մէջ հայ լեզուով հրատարակող ամէն թերթ, ինչպէս Մասիս ալ, 5 անգլ. ոսկի պիտի ստանայ՝ իբր բաժնէքին իրենց յարմար դատած տեղերը ձրի բաժանորդագրութեամբ իրենց թերթէն զըրկելու համար:

Այս կարգադրութիւնը առիթ կուտայ ինձ դիտողութեան մը: Արմուր (Armour) անուն մեծահարուստ անձ մը կայ Չիքալօի մէջ՝ որու առեւտրական զբաղումն է ամէն տեսակ մօր վաճառում: Օր մը այս անձին կը ներկայանան երկու Տիկնայք որոնք կը խնդրեն իրմէ բարեգործական նպատակի համար տրուելիք հանգէսի մը պիւճեխն համար «խոզի ապուխտ մը» նուիրել: — «Ես ապուխտը կը ծախեմ, նուէր չեմ տար» կ'ըսէ, մեծ զարմանքի մէջ թողնով Տիկնայքը՝ որոնք բնաւ չէին ակնկալեր մերժուիլ այսպիսի մեծահարուստ անձէ մը՝ միայն «խոզի ապուխտ մը» խնդրելու առթիւ, որու արժէքը հազիւ մէկ երկու մէճիտ է: Տեսնելով զարմանքնին՝ Արմուր կ'աւելցնէ. «Մի՛ զարմանաք ըսածիս. այս իմ գործս է, ես ապուխտը ձրի չեմ տար. բայց ըսէք տեսնեմ, այդ գործին արժանիքը ի՞նչ է» և երբ կը տեսնէ որ իրաւէն բարեգործական է նպատակը և նպատի արժանի, 25 տօլարի չէք մը կուտայ իրենց: Երբ եկեղեցին մերն էր, Վոքսմուքեան համար գորդ մը տուի. երբ փակուեցաւ՝ ամէնքն ալ ետ առի: Գորդ չեմ նուիրեր ես բարեգործական նպատակի համար, գորդը կը ծախեմ, ատ իմ գործս է: Փակագիծի մէջ ըսեմ

որ՝ ասի Ամերիկեան գաղափար է, Պոլսեցիք եթէ «թօփ մը խասա» պիտի նուիրեն Որբանոցին, չըլլայ որ ըրածնին սխալ կարծելով՝ այլևս այդ տեսակ նուիրատուութիւններ ընելէ դադրին: Այո՛, թող դադրին՝ բայց միայն այն պայմանաւ որ՝ Արմուրի նման՝ անոր արժէքին հինգ կամ տասն անգամը հընչուն դրամ տան, իսկ եթէ չի պիտի տան, ես պիտի ըլլամ առաջինը խնդրողներուն որ մոռնան այս գրուածը և նորէն տան մաս մը իրենց վաճառած ապրանքներէն՝ որպէս կուտային ցարդ:

Բայց թէ ինչու պատմեցի Արմուրի ըրածը, ահաւասիկ: Կարգ մը գրութիւններ երեւցան թերթերու մէջ սա իմաստով թէ, թերթերը մրցանակ չահելու համար կը հիւրընկալեն ալքոլամոլութեան դէմ գրուած յօդուածները, և որով այս անգամ ալ՝ 50 սկիիին համար հրատարակած պիտի ըլլան վերոյիշեալ հաւաքածոյքը: Ես պիտի ըսեմ որ, այո՛, եթէ թերթերը, առանց երեք հանրութեան օգտակարութիւնը նկատի առնելու, միայն շահու համար ընէին այս բանը, դարձեալ բոլորովին օրինաւոր և պատուաւոր բան մըն էր ըրածնին և ոչ տարբեր որ և է առուտուրի մարդու մը ընելիքէն: Ո՛վ ըսաւ որ թերթերը կը հրատարակուին միայն հանրութեան օգտին համար. թէ անոնք՝ բարեգործութիւններ են ընթերցողաց համար: Գոնէ այսպէս պէտք չէ ըմբռնել: Անոնք շահ արտադրելու համար հաստատուած ձեռնարկութիւններ են, հանրութեան ալ օգուտ ունին, կ'ընդունիմ, բայց իմ կամ քու ըրած առուտուրդ ալ հանրութեան օգուտ ունի. ապրանքը չինողը, գործաւորները, գրագիրները անով ապրուստին ճարելէն զատ, արտադրուած կօշիկը գործածողն ալ իր ոտքերը վիստուելէ կազատէ, հովանոցը գործածողն ալ ինքզինքը անձրեւէն կը փրկէ ևն. ևն. և ինչու մեղք չի համարուիր ինձ որ և է պատուաւոր միջոց՝ որով տօլար մը կարենամ շահիլ, բայց մեղք կը համարուի լըրագրապետին: Ո՛չ ապաքէն, ազդարարութիւն կը հրատարակեն լրագիրները փոխարէն դրամ ստանալով. ուրեմն ես ալ ուզեր եմ

փոխանակ ապրանք ազդարարելու՝ հակալքօրական քարոզներ ազդարարել և զանոնք հրատարակելու համար կը վճարեմ: Ինչպէս ապրանքի ազդարարութեան մը համար վըճարուած դրամը կարելի է սպասուած յաճախորդը չի բերեր ազդարարողին՝ այնպէս ալ կարելի է իմ վճարածներս սպասած արդիւնքս յառաջ չի բերեն, բայց լրագրին Տնօրէնը հրատարակելէն անդին պատասխանատուութիւն չունի. մնացեալը իմ բողոքիս:

Եթէ հանրութիւնը բան մը ունի ըսելու, այն ալ սա է որ չնորհակալ ըլլալու է խըմբագիրներուն որ փոխանակ իրենց սովորական գինով ընդունելու այս ազդարարութիւնները, հանրութեան օգտակարութիւնը նկատողութեան առնելով՝ մեծապէս զեղչեալ գիներով կ'ընդունին զանոնք, որու համար ես իրր անհատ մը՝ շատ չնորհակալ եմ իրենցմէ: Գալով թերթերու Տէր և Տնօրէններուն, անոնք մտիթարութեան պէտք չունին, քանի որ քաջ գիտեն թէ ամէն բարիք ընող պիտի քննադատուի և քաջքուքի ենթարկուի և իրենք չեն ակնկալեր բացառութիւն ըլլալ այս ճակատագրէն:

Յ. Ս. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ

Մ. Խ. — Հրատարակելով Յարգելի Նամակագրին այս Յայտարարութիւնը, որ հինգական ոսկիի նոր նուէր մը՝ կամ իր բառով «փոխարինութիւն» մը կը յատկացնէ մեր թերթերէն ամէն անոնց որոնք ուզեն արտատպել յառաջիկային իր զրկելիք հակալքօրական հաստատածներու հաւաքածուն, — հրատարակուած ու հրատարակելի յօդուածներէն քաղուած, — առաջին օրինակը կուտանք յարգելու իր փափագը, որով չուզեր որ այլևս իր անունը խառնուի այս հարցին, անձը մոռցուելու և միայն գործին վրայ ուշադրութիւն դարձուելու համար, — գործ մը գերազանցապէս հանրօգուտ ու մարդասիրական: Ապա թէ ոչ, մէկէ աւելի գրելիքներ պիտի ներկայացնէր իր այս նոր գաղափարը որուն գործադրութիւնը 40 — 50 ոսկիի նոր զոհողութիւն մը կը պահանջէ, — ենթադրելով որ 8 — 10 թերթ ուզեն արտատպել վերոյիշեալ հաւաքածուն, — նախապէս տրամադրուած 60

ուկիէն զատ : Այնպէս որ, գրաւոր քարոզ-
 ներու մրցումին ու քարոզագիրքին հրատա-
 րակութեան համար յատկացուած գումարին
 հաւասար (100 անգլ. ոսկի) գումար մը կը
 յատկացուի նաև այս զուտ աշխարհիկ մրց-
 ման, որով՝ անոնք որ այն ատեն բաներ մը
 գրել ու զրուցել կարծեցին՝ հիմայ կարկա-
 մած պիտի մնան, տեսնելով որ կրօնական-
 ներով սկսուած մրցում մը աշխարհականնե-
 րով կը շարունակուի, և լրագրութիւն ու
 յօդուածագիրներ վեղարաւորներուն հաւա-
 սարապէս օգտուելու առիթ մը կը գտնեն :

Թաւաշանճեան էֆ.ն, իր նամակին վերջի
 մասին մէջ, քանի մը օրինակներով ու հա-
 կիրճ խորհրդածութեամբ մը՝ որ և է խմբա-
 գիրէ աւելի համոզիչ կերպով կը փաստա-
 բանէ մեր թերթերուն կամ խմբագրութեանց
 փութկոտութիւնը, իրենց էջերը բանալու
 համար հակալքուական պայքարին, — բան մը
 զոր հեզնողներ կամ մեղադրողներ գտնուե-
 րն — Բայց... քիչ մնաց մոռնայինք թէ իր
 անձին վրայ չպիտի խօսէինք ու իր անունը
 չպիտի կցէինք մեր գրելիքներուն : Լաւա-
 գոյն է ուրեմն վերջացնել :

Խմբագրութիւն «Մասիս»ի

ԱՐՁԱԿ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Չ Ա Ւ Ս Կ Ս

Ձգալէ վերջ բոլոր այն տուայտանքները,
 որոնք իմ ներսս կը կրծեն, դէմքս դալարել
 կուտան և աչքերուս շուրջ տառապանքին
 սև երիզը կը քաշեն, — երբ, յոգնաբեկ, տա-
 կաւին ցաւերուն խածատու մը կը զգամ մոր-
 թիս տակ և երակներուս մէջէն դացած չէ
 դեռ անոնց սարսուռը, յանկարծ Ձայն կը
 տեսնեմ որ երեսիս կը խնդայ :

Անիկա միայն այդ ժամերուն կը խնդայ
 ինձի, իմ մէջս այն ատեն միայն կը յայտնուի
 անիկա, երբ անտանելի ցաւ մը կը գալարէ
 դիս :

Վիշտը ճանչնալէ առաջ՝ Ձայն չէի ճանչ-
 նար : Ձեմ գիտեք թէ ի՞նչ օր ծնաւ, բայց

այժմ անոր գոյութիւնը չըջապատած է զիս :
 Յաճախ իմ մէջս կը զգամ Ձայն, բայց շատ
 աւելի յաճախ հեռուն, շատ հեռուն կը կար-
 ծեմ Ձայն . . . :

Տարտամօրէն կը ճանչնամ Ձայն : Երկա-
 րատև անքնութիւններէ թմրած ուղեղիս մէջ
 անոր աչքերը տարտամ պատկեր մը թողած
 են, որ դէպ հեռուն կ'երկարի . . . :

Ամպեղէն մազեր ունի Ան, լուսաւորնե-
 րու պէս աչքեր . անոր դէմքին չըջագիծը
 պարապութեան մէջ ուրուագծուած է :

Աւելի կը ճանչնամ իր ժպիտները քան
 դէմքը : Այդ ժպիտները օդին մէջէն կը զգամ
 և զանոնք կը տեսնեմ երբ աչքերս գոցեմ
 գինով հեշտանքի մը մէջ : Աւելի կը ճանչ-
 նամ իր նայուածքները քան աչքերը : Իմ
 արտեւանունքներովս կը շնչեմ զայն, կը
 ճանչնամ անոր շնչիւնը, որ խունկի պէս կը
 բուրէ օդին մէջ և զիս կը գինովցնէ. գիտեմ
 նոյն իսկ անոր շարժումները, զորս կը նըշ-
 մարեմ մահուան դողերէն վերջ : Օ՛հ, խեն-
 դեանալս կուգայ երբ անոր թաթիկները կըզ-
 գամ վզիս շուրջ : Անիկա իմ Չաւակս է որ
 հեռուն, տեղ մը կը բնակի. անիկա ծնած է
 իմ ցաւերէս և վիշտովս կը սնանի :

Անոր նեղութիւններն ու տառապանքը
 կրելուս համար երջանիկ եմ, քանի որ այդ
 ցաւերուն միջոցաւ է որ Ան իմս եղած է :
 Շատ անգամ կը ստիպուիմ յուղումներու ուղ-
 կէանոսին վրայէն անցնիլ, միւս կողմի ա-
 փին վրայ Ձայն վերագտնելու համար : Պար-
 տաւոր եմ ամբողջ ատրաշէկ հորիզոնն ըմպել
 և արեւը ցամքեցնել, Ձայն վերագտնելու
 համար գերագոյն գիշերին մէջ : Յերեկուան
 տանջանքներէն վերջ, պէտք է զգամ որ
 կեանքս կ'այրի ու կը սպառի տենդերու մէջ,
 որպէսզի կարենամ քիչիկ մը մօտենալ անոր :
 Գուցէ զիս չի սիրեր ան . . . Ես՝ գերին
 եմ իրեն :

Օր մը, սակայն, առ յաւէտ պիտի վերըս-
 տին միանամ իրեն . այսպէս գուշակել կու-
 տան ինձ բոլոր այն գիշերները, որոնք
 իր ներկայութենէն խնկաւէտուած են և ա-
 նոր թրթռացումներովը ներդաշնակուած են :

Ecrits pour l'Art (1st. 1)



Ն Ա Ի Ա Կ Ը

Մարմարայի ափանց վրայ կ'երկարին խոռոչաւոր հողի գիծեր և ջուրէն մաշած սաւրաւանդներ : Աստնք բարձր ու անմշակ դաշտեր են, աւելի ճիւղը՝ բլուրներ, որոնք ալիքներուն երթեւեկէն փորուած, խորապէս պարպուած կուրծքեր ունին և կէս առ կէս նուազած են :

Դեղնագոյն փոքրիկ ապառաժներ ցցուած են հոս հոն . ու անոնց աւերակօյտերուն մէջ բոսած են վախա դալկադէմ կնիւններ, կորաքամակ, կակուղցած . իրենց շուքը կ'երկարի և կնճիռներու պէս գիծեր կը ձեւացնէ : Երբ մութը կոխէ, բոլոր այս առարկաները իրար կը խառնուին գիշերին մէջ : Միայն ժայռերն են որ իրենց դեղնագոյն կատարներով կը պատուեն մթութիւնը, երբ ոչ մէկ մրմունջ, ոչ մէկ շշուշ չի լսուիր . . . :

Ամառնային գիշեր մըն էր : Լազուարթ ծովը կը հայլիանար մութին մէջ և կոհակներուն երկար գիծը կ'ոլորուէր, գալարուն մեծ օձերու նման :

Ծովափը աներեւոյթ եղած էր գիշերին մէջ, ամէն սահման ջնջուած էր . հորիզոնը անհունօրէն լայնցած էր, և կարծես ծովը անսահման և քառասային տարածութիւն մը ստացած էր :

Երկար նաւակին մէկ անկիւնը կղկտած, ու անգիտակից յուշմունքով մը առլցուն, կը գիտեմ մթութիւնը :

Չենք խօսիր : Ոչ մէկ շշուշ կը բարձրանայ : Կը լսեմ միայն թիւերուն միօրինակ կափկափումը, պզտիկ կոհակներուն վրայ :

Թիթեանիկի յոգնած թեւերու թրթռացում մը կը սարսռայ և կենդանութիւն կուտայ անջրպետին փրփրերախ մթութեան և շուքի ոլորաներ թեթեւօրէն կը գլտորին առնուրջներու նման, տեսակ մը քաղցր շշուշ բարձրացնելով :

Յուրտ հով մը հառաչանքի մը նման կ'անցնի, մինչ օրը, հետզհետէ խայթող կ'ըլլայ և կարծես կ'ասղնտէ շօշափած մթութիւնը :

Սաւարին գիծերուն վրայէն կը նշմարեմ աւելի մթաստուեր ամպեր, որոնք տեսանելի կը դառնան իրենց սահած գացած ատեննին միայն և երկնակամարն անդորրութիւնը կը խանդարեն շարժուն երազանքներու նման :

Ու այս բովանդակ շրջանակն ընդարձակ, որ անօրինակ կերպով հրաշալի է, թանձրացեալ Անուրջի մը պէս կ'երեւայ . . . :

Կ'ուզէի անշուշտ սահիլ անցնիլ այսպէս, խաւարին ընակիչները չվրդովելու համար երբեք . կ'ուզէի իմ շուքս տեսնել և զգալ շունչը բոլոր այն էակներուն, որոնք օդէն ալ աւելի ձկուն են : Կ'ուզէի մտիկ ընել անոնց դանդաղ խորասուզումը՝ դէպ ի ծովուն ծոցը և անոնցմէ ըխած թեթեւ երաժշտութիւնը, թափանցիկ, անիրական :

Նաւակս թող այսպէս յաւիտեան ձեղքէր խաւարը, և այս ճամբան ըլլար անեզր :

Այլևս չտեսնէի գիշերուան պատուիր՝ լոյսէն : Այլևս չտեսնէի էակներուն նուազիրը, հորիզոնին ճերմկիրը և ծովուն մթութեան կապտանալը : Սպիտակ թռչուններ այլևս չողձէին անջրպետին խաւարային անբժուութիւնը, ծիրանեզոյն ամպեր այլևս չեղծանէին երկնքին անձև ու վսեմ լուսթիւնը : Բան մը չփոխուէր և բան մը չլսուէր :

Նաւակին մէջ ընկողմանած, ես ինքս ալ մթութեան մէջ սահող ստուեր մը եղած, այս ուղեւորութիւնը կուզէի մինչև վերջը կատարել : Նաւակս ոչ մէկ ծովափի մօտենար ու ես, գիշերին ուրուական հետեւորդներէն շրջապատուած, ճամբորդէի դէպ ի անըջային աշխարհ մը, ուր բնաւ չժամանէի սակայն . . . :

ՉԱՊԻԼ ԵՍՍՅԵՍԵ

Թարգմ. ԼԵՒՈՆ ՔԻՒՆՃԵԱՆ.

Ecrits pour l'Art (Թիւ — 3)

Հ Ա Կ Ա Լ Ք Ո Լ Ա Կ Ա Ն

ՊԱՅՔԱՐԸ

ՆԵՐԿՐՈՂ ԵՅՂՈՒՄԸ

Ալքոլին գործած չարիքները աւելի լաւ մըրանելու համար պէտք է նախ ճշդենք թէ ալքոլը իսկապէս ի՞նչ ազդեցութիւն կը գործէ մարդուն վրայ, և թէ ի՞նչ հակառոշ ջապահիկ տարրեր կը մտնեն անոր մէջ, և անոր գործածութեան անպատեհութիւնները կ'աւելցնեն :

Եւ ալքոլ ըսելով՝ այստեղ գուտ ալքոլին չեմ ակնարկեր, այլ այն ալքոլին՝ զոր

մարդկային էակը կուլ կու տայ այլ և այլ բաղադրութեանց, նոյն իսկ պատուական հուշակուած գինիներու ձեւին տակ Որովհետեւ ինչպէս ըսած է Փրանսայի նշանաւոր բժիշկ մը՝ Պ. Ա. Պարաթիէ, թէեւ այդ պատուական հին գինիներէն միակ դաւաթ մը ո՛ր եւ է փնաս չի պատճառեր, բայց երբ դաւաթը կրկնուի, երեքուի ամէն օր, այն ատեն՝ որչա՛փ ալ բնական, առողջ ու մաքուր ըլլայ, կրկին ամէնէն հասարակ ոգելից ըմպելիներու պէս փնաս կը պատճառէ մարդկային առողջութեան :

Ապսէնթը անգամ անփնաս ըմպելի մըն է, պայմանաւ որ օրական միակ դաւաթ մը խմուի, բայց երբ այդ չափը կ'անցնի, անչուչտ փնասակար կը դառնայ : Այսպէս են նաեւ կարգ մը դեղեր՝ որոնք թէեւ մահացու են, բայց երբ չափազանց կը գործածուին՝ սպանիչ կը դառնան :

Այսպէս՝ գինին, մրգողիները, ումը, քօնեաքը, օղին, ամէրը, պիթէրը, ապսէնթը, քիրչվասէրը, շարթրէօղը, պէնէտիքթինը, վերջապէս ալքոլով շինուած բոլոր ըմպելիքները փնասակար են, երբ չափէն աւելի գործածուելով ալիոյամոլութեան կը մղեն մարդը :

Մենք ըսինք թէ կարգ մը մահացու դեղեր կարելի է գործածել պզտիկ չափով ու չփնասուիլ : Ըսինք դարձեալ թէ միեւնոյն բանն է նաեւ ալքոլին համար : Բացատրենք թէ ինչպէ՛ս կ'ըլլայ ասիկա : Երբ պզտիկ դաւաթ մը ալքոլ կը խմենք՝ հիւթանջատ գործարանները ու մանաւանդ երիկամունքը խկոյն դայն կ'անհետացնեն : Բայց երբ ալքոլին քանակութիւնը աւելնայ՝ այն ատեն՝ այդ գործարանները չեն կրնար բոլորը մէկ անհետացնել, և ինչ որ չեն կրնար անհետացնել՝ կը վառի և առաջ կը բերէ թթուածինի սպառում մը, որ իրեն հետեւանք կ'ունենայ մարմնին կենսական նիւթերուն սպառումը :

Բայց ալքոլին այդ կիզումը վայրկենական չէ՝ մինչև որ ամբողջովին սպառի, անիկա կը շրջի արեան մէջ, կը մնայ բազմաթիւ օրեր, և այդպէս՝ երբ մարդկային գործարանաւոր

ութեան մաս կը կազմէ՝ ուղեղին վրայ աննրպաստ ազդեցութիւն մը կը գործէ իր քանակութեան և ենթակային ֆիզիքական տրամադրութեան համեմատութեամբ : Այդ ազդեցութիւնը նախ գրգռիչ է, յետոյ ճնշող կը դառնայ, և հետեւաբար ուղեղին կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարէ :

Այս անցողակի խանգարումն է որ սուր ալիոյամոլութիւն, ուրիշ կերպ ըսելով՝ գինովութիւն կը կոչուի : Այդ պարագային՝ ալքոլը իր աննպաստ ազդեցութիւնը կը գործէ ա՛յնքան ատեն՝ որքան ատեն որ չէ անհետացած, և անհետանալէն վերջ ամէն բան կրկին իր սովորական վիճակը կը վերըստանայ : Սակայն երբ այդ խանգարումը մշտնջենաւորուի, երբ մարդկային գործարանները չբաւեն շարունակաբար և առատօրէն խմուած ալքոլը անհետացնելու, այն ատեն՝ առաջ կուգայ ո՛չ թէ մասնակի խանգարում մը՝ այլ մարդկային ընդհանուր գործարաններու խանգարում մը որ արտակարգ վիճակի մը կը մատնէ մարդը : Քրօնիք ալիոյամոլութիւնն է ասիկա :

* *

Տեսնենք հիմայ թէ ի՛նչ չարիքներ կը պատճառէ ալքոլը, և թէ որո՞նք են իր ախտանիշերը :

Մարդ երբ ու է ոգելից ըմպելիք կը խմէ, —քիչ կամ միջին քանակութեամբ, —խկոյն տեսակ մը հրճուանք, բնդհանուր գրգռութիւն և ուղեղային գործունէութեան կենսաւնակութիւն մը կը զգայ : Բայց միեւնոյն ատեն՝ իր ուշադրութեան կարողութիւնն ու զգայարանքներուն ըմբռնողութիւնը կը նուազին : Այդ գրգռութեան կը յաջորդէ զըլխու ծանրութիւն մը՝ ընկերացած մտաւոր կարողութեան աւելի կամ նուազ շեշտուած տկարացման . ասկէ զատ՝ քալուածքը կը դեղուի, բերանը կը չորնայ, թուքը կը թանձրանայ և խուխի կը վերածուի, գինովը կը նեղուի նաև ստամոքսի անհանգստութեամբ և ցաւագին ու տաժանելի փսխունքներ կ'ունենայ, շատ անգամ ալ դալուկի (ictère, սարըլք) կ'ենթարկուի, շնչառութիւնը կը խանգարուի և մորիքը արեան կուտակման ենթակայ կը դառնայ :

Բայց երբ խմուած ալքոլին քանակութիւնը կ'աւելնայ, այն ատեն՝ ուղեղային խանգարումները աւելի՛ կը շեշտուին, ու շիմութիւնը կ'անհետանայ, գինովը անզգայութեան վիճակի մը մէջ կ'իջնայ, շնչառութիւնը հոնգիւնի կը փոխուի, բազկերակին զարկը կը նուազի և սրտին գործունէութիւնը կը սկարանայ:

Սուր ալքոլամոլութեան առաջ բերած այս տարբեր վիճակները հազիւ քանի մը ժամ կը տեւեն, խոր քուն մը և առատ շնչառութիւն մը ալքոլամոլը կ'առողջացնեն, բայց երբ այդ վիճակը աւելի մեծ համեմատութեանց հասնի, այն ատեն՝ կրնայ նոյն իսկ մահ առաջ գալ: Ամէն պարագայի մէջ, ալքոլին ազդեցութիւնը կը մնայ մէկ կամ աւելի օրեր, և անհետանալէն վերջն իսկ ալքոլամոլը չ'ազատիր անոր պատճառաւ առաջ եկած դժուարաշնչութենէն:

Անցնինք քրոնիք ալքոլամոլութեան և քննենք անոր պատճառած վնասները:

Ալքոլի շարունակական չափազանց գործածութիւնը առաջ կը բերէ բազմաթիւ խանգարումներ՝ որոնք մարդկային գործարանաւորութիւնը կը յոռելի շեն, և աւելի մեծ համեմատութեանց հասնելով կը յանգին ալքոլական մարմնաւերութեան (cachexie alcoolique): Մարսողական խողովակին մէջ առաջ կուգան հետեւեալ աւերումները. ստամոքսին լորձնամաշկը կ'ապասերի, ստամոքսային ստորածակը (pylore) կը նեղնայ, ստամոքսը կը լայննայ և աղիքներու լորձնամաշկը կը խաթարուի: Ասոնցմէ զատ, փայծաղը կը թուլնայ և երբեմն ալ բոլորովին կը կարծրանայ. պանկրէասը (pancréas) կը խոչորնայ և ճարպով կը լեցուի: Մարսողական խողովակին և իրեն յարակից գործարաններու այս աւերները կը յայտնուին նաև ախորժակի պակասով, յետոյ՝ գինովը դժուարահալութիւն և ստամոքսային ցաւեր կ'ունենայ, ծարաւ կը դգայ, դալուկի կ'ենթարկուի, կը փսխէ, ու մանաւանդ, առտունները, անօթի փորանց կը նեղուի մաղասի առատութենէն:

Ստամոքսային խանգարմանց կը միանան աղիքային խանգարումները: Լեարդին աւեր-

ները կը յայտնուին բազմաթիւ ու այլազան ախտանիշերով: Կը վնասուին նաև երիկամունքը, մանաւանդ երբ ուրիշ հիւանդութեանց պատճառաւ տրամադիր են աւերուելու: Վերջապէս՝ միզային փամփուշտներու իջուածքն ալ կրնայ ալքոլամոլութենէ առաջ գալ:

Աւերներու այս շարքը այսքանով չի վերջանար: Տակաւին կայ սիրտը որ մեծապէս կը վնասուի, դեղնորակ գոյն մը կը ստանայ և ճարպով կը ծածկուի, արիւնը կը խաթարուի, առաջ կուգան սուր կամ քրոնիք անարիւնութիւն, արեան շրջանի անկանոնութիւն. բերանն ալ զերծ չի մնար ու կը վնասուի իր կարգին: Ու մենք միայն գըլխաւորները կը թուենք: Այլապէս՝ կարելի է անվերջ կերպով երկարել այս շարքը:

Ալքոլի չափազանց գործածութիւնը պատճառ կը դառնայ որ ալքոլամոլին վրայ եկած տարբեր հիւանդութիւններ, ինչպէս կողացաւթոքատապ, և այլն, շա՛տ աւելի մեծ համեմատութիւններ ստանան, և շա՛տ աւելի վտանգաւոր դառնան: Ալքոլամոլներու թոքախան անգամ շատ դիւրութեամբ կը փոխուի արագահիւժ (galopant) թոքախախ:

Ալքոլի չափազանց գործածութեան կարեւորագոյն վնասներէն մէկն ալ ա՛յն է որ մարդուն զգայարաններուն վրայ կ'ազդէ և անոնց կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարէ: Յաճախ՝ ալքոլամոլը կատարեալ անզգայութեան կը մասնուի, շատ անգամ ալ բանդագուշանք կ'ունենայ: Կը պատահի երբեմն որ երեւակայական ճանճեր տեսնել կարծէ իր շուրջը, որովհետև ալքոլը աչուներու զօրութիւնն ալ կը խաթարէ: Եղած են ալքոլամոլներ որոնք անա՛նկ կարծած են թէ՛ մուկեր կը շրջին իրենց մարմինն վրայ: Լսողութիւնն ալ անվթար չի մնար ալքոլամոլին քով, ինչպէս չի մնար նաև շօշափելու կարողութիւնը: Թուենք նաև այն վնասը որուն կ'ենթարկուի ալքոլամոլին միտքը: Այդ չէ՞ պատճառը որ բանականութիւնը կը կորսնցնէ, ըրածը թողածը չի հասկնար, անիմաստ աղաղակներ կ'արձակէ, կը կոտորէ, կը թափէ, և յաճախ՝ աւելի ծանր ու անդարմանելի արարքներ կը գործէ:

Չվերջացուցած՝ ըսենք նաև թէ ալքոլին առաջ բերած վնասները, ու մասնաւորաբար ալքոլական մարմնաւերութիւնը ժամանակէն առաջ կը ծերացնեն ալքոլամոլը, և ճամբան կը հարթեն շարք մը վտանգաւոր հիւանդութեանց, ինչպէս՝ կաթուած, և այլն, և այլն: Արդէն չկայ հիւանդութիւն մը որ իրեն սկզբնապատճառ չունենայ նաև ալքոլը:

* *

Բլօֆ. Ռէյմօն, վերջերս բարիզի Գիտական Ակադեմիին առջև արտասանած մէկ բանախօսութեան մէջ, հետեւեալ կերպով կը սահմանէր ոգելից ըմպելիներու ազդեցութիւնն ու վտանգները, ախտաբանական տեսակէտով. —

«Պարոններ, մեր յարգելի պաշտօնակիցը՝ Պ. Լապօռտ, Բժշկական Ակադեմիին 1903 յունուար 27ի նստին մէջ յանուն ալքոլամոլութեան յանձնաժողովին՝ կարդաց նշանաւոր տեղեկագիր մը՝ որ կը յիշատակէ բոլոր այն վտանգաւոր տարրերը որոնք ընդհանրապէս կը գտնուին հանրային գործածութեան սահմանուած ըմպելիներու մէջ: Այդ տեղեկագրին առթիւ՝ կը փափաքիմ ներկայացնել վիճակագրութիւն մը զոր Սալբէթրի հիւանդանոցին մէջ պատրաստած եմ, և որ ցոյց կուտայ թէ 1902 յունուար մէկէն մինչև 1903 յունուար մէկ հիւանդանոց ներկայացող քանի՛ հիւանդներ իրենց առողջութեան աւերման պատճառ ունեցած են ալքոլամոլութիւնը:

«Այդ մէկ տարուան շրջանին՝ հիւանդանոց ներկայացած են միջին հաշուով 2000 այցելու հիւանդներ՝ այր ու կին հաւասար համեմատութեամբ, և 290—320 մնայուն հիւանդներ՝ որոնցմէ 110—120 այր և 180—200ը կին: Արդ, այս բոլոր այցելու և մնայուն հիւանդներուն երեք քառորդը ալքոլամոլ էին՝ ինչ որ հարիւրին 66 համեմատութիւն մը կ'ենթադրէ: Կիները՝ բազումամբ այրերուն՝ գրեթէ հաւասար չափով ալքոլամոլ եղած էին: Այդ 66 առ հարիւր ալքոլամոլները կըրնանք բաժնել հետեւեալ կերպով. —

«10ը ծայրայեղ ալքոլամոլ, մասնաւորաբար խաթարուած ապսէնթի և նմանօրինակ ըմպելիներու գործածութեանէն»

«40ը՝ չափաւոր ալքոլամոլ. առնք՝ միջին չափով գինի խմողներ են, զոր օրինակ օրական միայն 2—3 լիտր խմողներ, որոնք սակայն կը խոստովանին թէ պարբերաբար կը խմէին նաև կարգ մը ըմպելիներ, ինչպէս ապսէնթ՝ ու մասնաւորաբար «չամբօթ» կոչուած ըմպելի մը:

«Իսկ 16ը՝ համեմատաբար թեթև ալքոլամոլներ են. առնք խմած են միայն ճերմակ գինի, միջին հաշուով՝ օրական 2—3 լիտր միայն»:

Ուր էր թէ ալքոլամոլութիւնն ալ ունենար իր մանրէն...: Տոքթ. Պարաթիէ այս յատկանշական խօսքերով կը վերջացնէր իր մէկ բանախօսութիւնը՝ այս աւերիչ մոլութեան նկատմամբ: Այո՛, ո՛ւր էր թէ ալքոլամոլութիւնն ալ ունենար իր մանրէն, որպէս զի կարելի ըլլար անոր դէմ մաքառիլ ու դայն ջնջել:

Եթէ ժանտախար, քոլերան, դեղին տենդը և կամ համանման մահացու համաճարակներ հաղարաւոր գոհեր խլած են մարդկութեանէն, վստահ եղէք թէ ալքոլամոլութիւնը միլիոնաւորներ խլած է: Մասնաւորաբար՝ համաճարակները պարբերաբար միայն երեւան կ'ելլեն, մինչդեռ ալքոլամոլութիւնը ընդմիշտ գոյութիւն ունի:

Ասկէ դատ՝ համաճարակ հիւանդութեան մեռնող մարդու մը զաւակը ոչ մէկ ֆիզիքական վնասի կ'ենթարկուի այդ պատճառաւ: Բայց ալքոլամոլութեան համար այդպէս չէ. ալքոլամոլը, իր ֆիզիքական քայքայումն ալ կը փոխանցէ իր սերունդին: Ընդունինք ուրեմն որ ալքոլամոլութիւնը՝ չա՛տ աւելի աղետալի եղած է մարդկութեան համար, քան ամէնէն սոսկալի համաճարակներն ու ամէնէն ահարկու պատերազմները:

ԲԻԷՌ ԱԲԷՌԻ

Ծանօթ հրատարակագիր Արամ Անտոնեան հրատարեր է Ծաւլիկի խմբագրութիւնը վարելէ:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Գեղարուեստի զանազան ճիւղերուն մէջ հայ արուեստագէտներու ցոյց տուած մասնայատկութիւնները և գտած յաջողութիւնները ցոյց կուտան թէ մեր համայնքը գեղարուեստի լաւագոյն հակումներով սփռուած է: Թողով գեղարուեստի միւս ճիւղերը, որոնք իրենց կարգին կրնան ընդարձակ ուսումնասիրութիւններու նիւթ մատակարարել, ամփոփ կերպով ներկայացնենք մեր եկեղեցական նկարչութեան կարեւորութիւնը արուեստագիտօրէն:

Մեր մէջ եթէ այսօր բանասէր մը փափաքի գրել հայ նկարչութեան պատմութիւնը, նախ պէտք է եկեղեցական նկարները քննէ, որովհետեւ նախօրէ սերունդի նկարիչներուն ամենամեծ մասը, եթէ այսպէս կարելի է ըսել, կրօնական նկարներ պատրաստած են: Երկար քննութիւններու պէտք չիկայ հասկընալու համար ասոր պատճառը: Մենք ամէն բանէ առաջ կրօնական ժողովուրդը մըն ենք, և պարզ ժողովուրդը իր գեղագիտական յագուրդը եկեղեցական նկարներու մէջ կը գտնայ: Այդ շրջանը հեռացած է հիմա և բարեբախտաբար, նկարչական ամէն ճիւղերու մէջ հպարտութեամբ կրնանք անուանել հայ վարպետներու անուններ:

Եկեղեցական նկարներէն անոնք՝ որոնք 19րդ դարու առաջին կէսին արտագրութիւններն են, ընդհանուր առումով զուրկ են գեղագիտական ճաշակէ և գծուած են խիստ սկզբնական արուեստով մը. գաւառական եկեղեցիներու մէջ գտնուող նկարներու վրայ յաճախ կատարեալ հեռանկարի տարրական ծանօթութիւններու պակաս մը կը նշմարուի. այս տեսակ նկարներ Պոլսոյ եկեղեցիներուն մէջ ալ հաղուագիւտ չեն: Իբր արուեստագիտական գործ, այս նկարները բնաւ արժէք մը չեն ներկայացնիր, բայց մեծ խնամքով պէտք է պահուին իբր նմոյշները գեղարուեստի այս ճիւղին նախաքայլերուն որոնք պիտի կրնան ապագային ուսումնասիրու-

թիւններու առարկայ ըլլալ և մեր նկարչական պատմութեան իբր հաստատուն documents-ներ ծառայել:

Այդ նկարները զննելով մարդ կը համոզուի թէ արուեստը իր նախնական քայլերուն մէջ է եւ յունական ճաշակը ահագին ազդեցութիւն ունեցած է ատոնց վրայ: Թերեւս այս ճշմարտութիւնը շատերու հաճելի չը թուի՝ բայց իրականութիւն ըլլալէ չի դադարիր: Ատոնց մէջ, իրաւ է որ, կը նշմարուին երբեմն տաղանդի մը տկար յղացումները, ասով մէկտեղ չենք կրնար պահանջել իրենցմէ ներկայ կամ մեռնող մէկ քանի նշանաւոր նկարիչներու վրձինին տաքութիւնը եւ ճշտութիւնը, քանի որ այդ բարեմիտ անձերը ո՛չ դպրոցի երես տեսած էին եւ ո՛չ ալ Եւրոպական երկիրներ այցելած՝ ուր պիտի տեսնային անբաւ գանձ մը նկարչական գրուիւ-գործոցներու:

Տասնեւիններորդ դարու երկրորդ կէսէն սկսեալ գեղեցկագիտական հոսանք մը կրուկըսի ազդել հայ նկարիչներու վրայ եւ իտալական վարպետներու հետեւողութիւն մը կը նշմարուի: Այս միջոցին է որ կերեւան մեր եկեղեցական լաւագոյն նկարիչները Ումէտ Պէհզատեան, Արրահամ Սազայեան, Տելեմաք Էնքսէրճեան, Պետրոս Սրապեան, վերջին երկուքը գրեթէ մեծագոյն մասամբ ընդօրինակութիւններ կամ նմանութիւններ արտադրած են եւ եկեղեցական նկարներէ աւելի զբաղած են մասնաւոր յանձնարարութիւններու վրայ: Ումէտ եւ Սազայեան իրենց կեանքին մեծագոյն մասը եկեղեցական նկարներու պատրաստութեանը նուիրած են: Արրահամ Սազայեանի նկարներէն շատերը կան Սկիւտարի Ս. Կարապետ եւ Ս. Խաչ եկեղեցիներուն մէջ, ինչպէս նաեւ Ումէտի նկարներէն. երկուքն ալ զոյններու հաւասար ներդաշնակութիւն եւ խորունկ արուեստ մ'ունին. Սազայեանի «Խաչելութեան» նրկարը Ս. Կարապետի մէջ չեմ կարծեր որ իր նմանը ունեցած ըլլայ մեր որ եւ է եկեղեցիի մէջ, արուեստի բարձր կատարելութիւն մը կայ անոր մէջ: Իր միւս գործերը թէեւ արուեստագիտօրէն չիւնուած եւ գրեթէ ան-

Թերի արուեստով մը՝ բայց ընդօրինակութեան հետքեր կը կրեն եւ կան անոնց մէջ այնպիսի կրօնային—պատմական սխալներ որոնք չեն ներուիր արդի նկարիչներուն: Դարձեալ միեւնոյն եկեղեցիին մէջ «Յիսուսի ընթրիքը» լաւագոյն յաջողութիւն մը պիտի ըլլար, եթէ մէջտեղի նորաձեւ լամբարը ջրնջուած ըլլար: Չի մոռնանք աւեցնելու թէ Սագայեան եղած է նաեւ առաջնակարգ դիմանկարիչ մը:

Աւելի ինքնատիպ, տարօրինակօրէն յղացող արուեստագէտ մըն է Ումէտ որուն հաւասարող, այս կրօնական նկարչութեան մէջ, ո՛չ ոք կայ: Աննման տաղանդ մըն է որ բանաստեղծական թրթռացումի մը դրօշմը գրած է իր նկարներուն մէջ: Այցելած է Խալիս եւ Ռաֆայէլի ազդեցութիւնը կ'երեւայ իր սկզբնական նկարներուն վրայ: Բազմաթիւ նկարներ ունի Սկիւտարի երկու եկեղեցիներուն մէջ ալ: «Յիսուսի ծնունդը» «Համբարձումը» «Յարութիւնը» եւ զեռ շատեր որոնք մաքուր ներշնչման մը տաք հետքերը կը կրեն, մանաւանդ «Յիսուսի ծնունդը» շատ անգամ իբր օրինակ կը ծառայեն ուրիշ նկարիչներու:

Բայց իր գլուխ—գործոցը պէտք է համարել այն խոշոր նկարը Ս. Խաչ եկեղեցիին որ Յիսուս՝ Գեթսեմանիի պարտէզին մէջ կը ներկայացնէ, նկարին առաջին planին վրայ երեք բիրտ աչակերտներ խորունկ քունով մը կը խորթան գլուխին հակած: Ի՞նչ մը վերօք Յիսուս ժայռի մը վրայ փռուած կ'աղօթէ. իր առջեւ տաժանքի գործին՝ խաչը, բռնած է հրեշտակ մը. ուրիշ մըն ալ անոր ետին կը դանուի եւ իր ձեռքերով գրկած է Յիսուսը անութիւններէն: Հեռուէն լոյսեր կը նշմարուին որոնք կը լուսաւորեն բազմութիւնը որ դէպի պարտէզ կը դիմէ: Աշակերտներուն եւ Յիսուսի մէջ հակապատկերը այնքան զօրաւոր է որ մարդ կը սարսուայ, եւ անոնց այդ խորունկ թրմութիւնը դիտող հոգին անհուն վիշտով մը կը լեցնէ: Կը նշմարես Յիսուսի աչքերը որոնք կը պաղատին, որոնց մէջ արտասուքը չորցած է եւ սակայն անոնք Աստուածային

են: Հրեշտակներուն աղուորութիւնը եւ ճառագայթող ժպիտները կը թեթեւցնեն դիտողին ծանրացած հոգին. այս ամէնուն վրայ ուխտօրէն շլացնող լոյս մը կ'իյնայ երկնքի մէկ անկիւնէն. այս լոյսի հեղեղէն քիչ անդին մութ երկնքի մը վրայ տեղոյն լուսինը տոմոյն լոյսեր կը ցանցնէ քաղաքի հսկայ տաճարներուն վրայ:

Ասոր համարժէք գործ մը կարելի էր ներկատել նաեւ նոյն նկարչին Յիսուսի խաչէն վար առնուած վիճակը ներկայացնող նկարը, եթէ հոն գտնուող դէմքերը չի նմանէին Ռիպէնսի նկարած անձնաւորութեանց դիմազծութիւններուն: Հագուազիւտ կարողութիւններով օժտուած նկարիչ մը եղած է Ումէտ որուն նկարները թերեւս շատ քիչերու ուշադրութիւնը հրաւիրած են եւ մենք դժբաղդաբար չունինք իր կեանքի գիծերը ներկայող որ եւ է տեղեկութիւն:

Հոս նկատելի կէտ մը կը ներկայանայ սակայն՝ որուն առջեւ պէտք է կանգ առնել: Այսպիսի արուեստագէտներու նկարները կամ ընդհանրապէս մեր եկեղեցական պատկերները կը խնամժօլին պէտք եղածին պէս: Պատասխանը ժխտական է, որովհետեւ անոնք որ կոչուած են եկեղեցիներու բարեղարդութեանը հսկելու, չունին պէտք եղածին չափ ճաշակ, եւ չենք ալ կրնար պահանջել որ ունենան, այդ նկարները իբրեւ թանկագին իրեր չեն խնամեր, անոնք շատ անգամ կը փոշոտին, կը պատռին նոյն իսկ: Ո՛չ միայն լաւ չեն պահպանուիր այդ նկարները, այլ երբ երկարատեւ անտարբերութիւնով մը անխընամ՝ գունատի նկար մը, կը կարծեն թէ հինցած է եւ պէտք է զայն նորոգել: Այն ատեն միայն գործի կըսկսին, նորոգելու համար կը յանձնեն նկարը ողորմելիի մը որին քզինքը նկարիչ կը կարծէ և իր քմահաճօյքին համեմատ բոլորովին օտար գոյներով նկար մը մէջտեղ կը հանէ:

Ասոնք անհերքելի իրողութիւններ են զորս ի հարկին կարելի է մէկիկ մէկիկ համրել:


Ասկից աւելի անհեթեթութիւն երեւակայել կարելի չէ և այս ամէնը չի բաւեր, նկարը նորոգողը իր անունն ալ կը դնէ: Խոշոր գըրերով, անոր տակը:

Նկարի մը արժէքը իր հնութեան մէջ է .
 միւզէներու մէջ նկարներուն խնամք կը տա-
 նին որպէս զի չաւրուին և ոչ թէ նորոգել
 կուտան : Իսկ եթէ անպատճառ նորոգել հարկ
 ըլլայ, լաւագոյն վարպետի մը կը յանձնեն որ
 առանց բնականէն բան պակսեցնելու՝ կը ջա-
 նայ նախկին գոյները երեւան հանել :

Իսկապէս ցաւալի են այսպիսի գեղար-
 ուեստական խաթարումներ, և կ'արժէ սր
 եկեղեցիներու հսկող մարմինները քիչ մը ա-
 ւելի խնամք և ուշադրութիւն նուիրեն այդ
 կրօնական նկարներուն որոնց՝ ապագան ալ
 կը կարօտի, ներկայէն աւելի :

S. Կ. ԶԵՍԿԻՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ՍԵՆՅԵՐԳ



ԻՐԻԿՈՒԱՆ ԴԵՄ

Հեշտ այդուն մօտ երազեցի, մըրափիս մէջ,
 Վառ գոյներով դրասանգուած երգը կեանքին .
 Եւ դողդոջուն ծիածաններ մետաքսառէջ,
 Ու փաղփածոպ, կ'երկարէին աշխարհ մ'անգին :

Օրուան կեանքի տըւայտանքներ՝ իմ յորձանուտ
 երազներուս հըմայքն ի սպառ փարատեցին .
 Ու ղիտեցի կեանքը մօտէն, զերծ՝ պատրանուտ
 Խօլ խաղերէ, —կոտտանքներով դաժան խոցին :

Իրիկուան դէմ... Ըստուերները կ'իյնան արագ :
 Զուր աւտըւան երազանքներս ես կ'որոնեմ .
 Ըմպեց անոնց լոյս շիթերը սէր մը վայրագ .
 Հեծեծանքիս հետ մընացած, մինակ, հո՛ն եմ... :

1902

ՆՈՊԱՆ ԵՐԸ



Մթութեան մէջ վըհուկի մը պէս թախծադէմ,
 Ցաւոտ Սիրոյ հարուածն է որ կ'իջնէ կուրծքիս,
 Ու Տենջանքի ծիրանիէն հրաչէկ հոգիս՝
 Դեռ կը գրկէ յիշատակներ զորքս կ'ատեմ :

Բոլոր լոյսերն ա'լ մարեցան հետզհետէ,
 Ես կը սիրեմ այս խաւարը տառապաղին,
 Ուր վիշտ մը լայն՝ սիրտըս կուրծքէս դուրս կը նետէ
 Ու ես կ'ըմպեմ սև հեշտանքը ցաւոտ կեանքին :

Խաւարին մէջ չունիմ խարխափն երազանքին
 Ու կը դադրիմ սէրերու շուրջ թափառելէն :
 Բոցեղ աչքերս ունին կայծակ մը թախծաղին,
 Սիրաէս ցաւերն՝ հեծքեր վայրագ լոկ կը խլեն :

1904

ՄԻՍՍԿ ՄԵՏԱՐԵՆԸ

ՆՈՐՈՅԹԻ ՔՐՈՆԻԿ

ԱՌՏՆԻՆ ՇՐՋՍԶԴԵՍՏԸ

Մանաւանդ ամբան եղանակին է որ առա- նին շրջազգեստները յարգի կը դառնան, ո- րովհետեւ ճնշող տաքութիւնը կը հարկադրէ կիները՝ տան մէջ անցընելու օրուան մեծ մասը:

Զով մնալու համար, պէտք է կրել ծփուն և լայն զգեստներ, որպէս զի օդը ազատ ել ու մուտ գտնէ հոն:

Առտնին զգեստները զանազան ձեւերով կ'ըլլան:

Նախ կայ սօ սք լին, տեսակ մը երկար պլուզ կամ վաղեմի վերարկուն, որ ունէն մինչև ոտքերը կ'իջնէ, սկսեալ բիքսքմանէ մը. սօ սք լին կը նմանի գիշերահագուստի մը, բայց աւելի լայն ու զարդարուն նէկլիթե արդուզարդ մը ըլլալուն՝ զարդախուցին մէջ պէտք է հագնիլ, և կէսօրը անցածին պէս՝ վրայէն նետելու է:

Աննեկազգեստ (բօպ սք օամպր) աւելի զարդարուն է քան սօ սք լին: Ամէն վայել- չութիւն ու նրբութիւն կրնայ ունենալ իր վրայ:

Հիմա սենեկազգեստը «ամբիրեան» ձեւով կը շինուի, այսինքն ուղիղ, ո՛չ կամարածև և ո՛չ ալ մէջքին վրայ նեղցած: Այս ձեւ սե- նեկազգեստները, որոնք կը վայլեն նրբիրան կիներուն, բոլորովին անշնորհ երեւոյթ մը կուտան քիչ մը գէր կիներուն: Ուստի այս վերջիններուն կը յաճնարարուի այդ տեսակ սենեկազգեստներ չհագնիլ, այլ մէջքի դօ- սիով սենեկազգեստներ:

Պայէ կոչուած շրջազգեստը այնքան շը- նորհալից չէ. ծալքերով ուղղաձիգ շրջազ- գեստը կը գործածուի անոր տեղ, կամ թէ սափի ձեւով՝ մէկ-երկու վօլան քղանցքին վրայ: Սենեկազգեստէն յետոյ կուգայ առա- նին շրջազգեստը, որ կէսօրէն յետոյ կամ մտերմական շրջանակի մէջ կրնայ հագնուիլ: Անիկա կը բողկանայ փէշէ մը եւ ծփուն մազիկէ մը: Պոլիերով կը նմանին մազիկնե-

ները, կարճ՝ ետեւէն, ու երկար յառաջակող- մէն, մեծ օձիքով մը զարդարուն և ժանե- կազարդ. տարտամօրէն կը նմանին փօքր վերարկուի մը, կռնակի կողմէն թեթեւօրէն կամարածև, վայելչագեղ ու զարդարուն:

Կայ նաև քի-կաուբը, որ անգլիական նո- րոյթ մըն է, ինչպէս ցոյց կուտայ անունը, եւ որուն ճշգրիտ թարգմանութիւնն է «թէյի շրջազգեստ»:

Անգլիացիները, որոնք բնաւ զանց չեն ասուներ հանգստաւէտ պայմանները, կը սիրեն թէյ խմել ժամը հինգէն եօթը, թուրիկ զգեստներով: Ազուոր ու ծփուն արդուզար- դեր կ'ընեն, ապասելով որ ճաշի ժամը հնչէ: Այս նորոյթը մինչև մեղի հասած է, և գործ- նական գտած ըլլալունու համար անմիջապէս ընդունած ենք զայն:

Այս ձեւ շրջազգեստները նուրբ ու վա- յելուչ երեւոյթ մը ունին: Գերազանցապէս կանացի արդուզարդ մըն է, այն որ ամէնէն աւելի կը պատշաճի կնոջ գեղեցկութեան և ի վեր կը հանէ բոլոր հրապոյրները: Սիրուն ներքնազգեստ մը հրապուրիչ կը դարձնէ կինը:

* *

Անցողարար, քանի մը խօսք ալ ընենք հովանոցներու վրայ, մանաւանդ տարուան միջոցին երբ անհրաժեշտ են անոնք: Աչքա- ուս փոփոխութիւն մը չի նշմարուիր այդ մասին: Կոթերը աւելի կամ նուազ բարձր կ'ըլլան, հովանոցին կերպսը աւելի կամ նուազ տարածուն և զարդարուն:

Այս տարի նորոյթի կարգ անցած են անգլիական ասեղնադործութեամբ եւ լինօնէ հովանոցները, կամ թէ մետաքսէ՝ լիցօն եֆ- րիլ եղերքով: Վօլանները նորոյթէ՝ ինկած են, մինչ անդուսէ հովանոցները մեծ ընդու- նելութիւն գտած են: Ասկէ առաջ կ'ըսէին թէ ձրանսայի երկրորդ կայսրութեան շրջանի նորոյթները երեւան ելած ըլլալուն համար գործածական պիտի դառնան փօքր ու ծա- լածոյ հովանոցները, ծոպերով զարդարուն և հողմարգելներու հանգոյն, որոնց ընդհանրա- ցումը կը պարտինք էօժէնի կայսրուհիին: Բայց մինչև ցարդ ատանկ նորոյթ մը չի տեսնուիր:

ԻԻԱ Տ՝ԱՍԹԻ

Թարգմ. Զ. ՆԵՄՅԷ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՎիէննԱԿԱՆ Միթիթարեանց Բանկայթիի վարժարանին ամալերջի հանդէսը, որ կատարուեցաւ այս հինգշաբթի, գերազանցեց իր նախորդները՝ թէ՛ շահեկանութեան ու հանդիսաւորութեան կողմէ, եւ թէ՛ ցոյց տրուած դպրոցական արդիւնքին տեսակէտով, որոնք պատիւ կը բերեն այդ կրթական հաստատութեան տեսուչ ու հանդէսին կազմակերպիչ՝ Հ. Գարբիէլ Մ. Վրդ. Մէնէվիչեանի, ինչպէս նաեւ Վանատան մեծաւոր Հ. Գրիգորիոս Մ. Վրդ. Բալէմքեարեանի ու միաբան վարդապետներուն: Վարժարանի հովատուն ու ընդարձակ պարտէզին դուռնէն մինչեւ հանդիսավայրի յատկացուած մասը՝ օսմանեան ու աւստրիական դրօշներ կը ծածանէին, ու լայնատարած ծածկոյթ մը կը մեղմացնէր միջօրէի արեւին ազդեցութիւնը, թէեւ այնքան հոծ էր երկսեռ բազմութիւնը որ այդ ծածկոյթէն դուրս ալ լեցուած, տարածուած էր: Գեղեցիկ սեռը մանաւանդ, որուն համար կարելի է ըսել թէ մեծամասնութիւն կը կազմէր, իր ամառնային չքեղ ու գունազեղ արդուզարդերով՝ ակնապարար տեսարան մը կը պարզէր, պահ մը այն պատրանքը տալով թէ garden party մըն էր տեղի ունենալիքը՝ եւ ոչ թէ մրցանակաբաշխութիւն մը: Եւ սակայն բեմը, որուն վրայ կեցած էին բարձր դասերու աշակերտները, ու... կղերականներու ներկայութիւնը, չուտով կը փարատէին այս պատրանքը:

Այս տարի, Վիէննական Հարց վարժարանը բացառիկ պատիւի մը արժանացաւ՝ վայելելով ներկայութիւնը Աւտրեւհունգարական դեսպան Վսեմ. Պառոն ֆօն Բալիչէի, որուն կ'ընկերանային ընդհ. հիւպատոս Պ. Սէֆարովիչ ու Տիկինը, եւ Ա. քարտուղար Պ. Սիլաչի ու քոյրը: Դեսպանին քով բազմած էր Հայ—Հռոմէականաց Կ. — Պատրիարք Տ. Սապպաղեան Սրբազան, չրջապատուած իր կղերէն: Մեր Ս. Պատրիարքին կողմէ եկած էին յատկապէս Տ. Բարզէն ու Տ. Տիրայր վարդապետները: Ու անմիջապէս կրկնուեց

լարքը աշխարհական ծանօթ անձնաւորութեանց, բժիշկ, վաճառական, գրողէտ, հրապարակագիր, ուսուցիչ եւայլն, աշակերտաց ծնողքներէն եւ ուրիշ բազմաթիւ հրաւիրեալներէ զատ:

Որոշեալ ժամին, միջօրէէն յետոյ 2½ (Ը. Ե.) բացուեցաւ հանդէսը, կայս. Համիտիէ քայլերգին նուագումով որ յոտնկայս ունկնդրուեցաւ ու ծափահարուեցաւ: Յետոյ, ի պատիւ Դեսպանին, նուագուեցաւ աւստրիական մաուչը:

Յայտագիրը ճոխ էր ու պէսպիսութեամբ լեցուն: Երախտագիտական ուղերձներ կարդացին՝ Պ. Բ. Արճեան՝ օսմաներէն, Պ. Ս. Երազեան՝ հայերէն գրաբար, Պ. Յ. Արճեան գերմաներէն, եւ Պ. Լեւոն Բէյրլեան ֆրանսերէն, նուագածութեանց ընդմիջմամբ դաշնակի ու ջութակի վրայ զորս կ'ածէին սաշակերտները, ու խմբերգութիւններով խառն, ամէնքն ալ ախորժալուր:—Անցողաբար յիշենք՝ գրաբարագէտ հանդիսականի մը դիտողութիւնը, թէ Ոսկեղարու ոճը իր ազդեցութիւնը ունեցած ըլլալ կ'երևար մինչև այս դպրոցական հանդէսի յայտագրին վրայ ուր «խօսք» բառը գործածուած էր՝ ճառ կամ բանախօսութիւն բառերուն տեղ:

Կը ցաւինք որ Մասիսի այս հակիրճ բաժնին մէջ չպիտի կրնանք թուել հանդէսին բոլոր մանրամասնութիւնները, զորս լայնօրէն կը նկարագրեն արդէն օրաթերթերը: Ընդհանուր ուշադրութեան առարկայ դարձաւ վարժարանին վարչութեան տեղեկագիրը զոր կարդաց Հ. Մէնէվիչեան: Այդ տեղեկագիրը երկու մասի բաժնուած էր. առաջինին մէջ՝ կը յայտնուէր թէ վարժարանը՝ օժտուած նախակրթութեան յարմարագոյն ծրագրով մը՝ տարւոյս սկիզբը ունեցած է 135 աշակերտ, 95ը նախորդ չրջանէն և 40ը նորամուտ, և ներկայ տարեջջանը կը փակուի 117 աշակերտով որոնց 19ը օտարազգի են, յոյն, գերմանացի, աւստրիացի, մեքիք և այլն. ինչ որ ապացոյց մըն է վարժարանին իրական համբաւին: Հ. Մէնէվիչեան շեշտեց սու պարագան, թէ առանց Կրօնական կաշկանդուններու, հաւասար կրթութիւն մը կը

տրուի բոլոր աշակերտներուն : իր բանախօսութեան երկրորդ մասը գեղեցիկ յորգորական մըն էր «ինքնազարգացման» վրայ, շքեղանաւարտներուն ուղղուած :

Հայերէն, ֆրանսերէն ու գերմաներէն երեք սիրուն մենախօսութիւններէ զատ, զորս արտասանեցին Ա. Եփրեմեան, Վ. Մուրատեան և Ա. Թորգոմեան, դեռափի և սիրուն պատանիները, երկու փոքրիկ զաւեշաներ ներկայացուցին ուսանողները, ֆրանսերէն ու գերմաներէն. շատ յաջող էին նաև խմբերգ ու նուազածութիւն, որոնք ծափահարութիւններով կը վերջանային : — Ըսենք, դարձեալ անցողաբար, թէ հայերէն monologueին մէջ հեգնութեան բաւական մեծակ բաժին մը կար հայ թերթերուն ուղղուած, բայց մանկական անմեղ ու անգիտակից շրթունքներէ արտասանուելով՝ զուարթ ծիծաղներ միայն առաջ բերաւ : Մինչև իսկ մեր հակալքողական ծանօթ պայքարն ու Թաւաշանձեան—Մրցանակը իրենց յիշատակութիւնն ունէին այդ մենախօսութեան մէջ :

Կարգը եկած էր վկայականներու բաշխման : Այս տարուան շրջանաւաւտներն էին Պ. Պ. Ստեփան Երազեան, Պետրոս Արճեան, Հրանդ Աճէմեան, Յուստ Արճեան և Լեւոն Րէիզեան որոնք իրենց վկայականներն ստացան Կ. — Պատրիարքին, Պ. տը Գալիչէի, հիւպատոսին և Տիկնոջը ձեռքէն : (Հիւանդութեան պատճառով բացակայ էր Պ. Վահրամ Կիւմիւշեան, վեցերորդ ընթացաւարտը) : Յետոյ, կարգացուեցաւ ընդհանուր աշակերտաց վիճակացոյցը, պատուոյ յիշատակազիրներ ու միտալներ նուիրուելով իւրաքանչիւր կարգի մէջ յաջողագոյն հանդիսացողներուն որոնցմէ յիշենք, յաջ և յահեակ, Պ. Պ. Ա. Թորգոմեան, Ա. Եփրեմեան, Հ. Թէրզեան, Նուպար Եղուպեան, Մ. Աբէլեան, Գր. Զայեան, Ա. Աբրահամեան, և այլն և այլն : Նոյնպէս տանի չափ ծանրագին առարկաներ, արձաթեայ խաչելութիւն, ժամացոյց, լուսանրկարչական գործի, ոսկեզօծ աշտանակ և այլն, նուիրուեցան յաջողագոյն ուսանողներուն՝ առ ի խրախոյս : Վերջին նուագն էր

աւտրիարական քայլերգը, Gott erhalte, զոր գեղեցկապէս նուագեց ու երգեց երաժշտախումբը. հանդէսը փակուած էր :

Մեկնելէ առաջ, Աւտրիոյ Վսեմ. Դեսպանը իր շուրջը հրաւիրելով Հ. Գալէմքեարեանը, Հ. Մէնէվիչեանը ու վանատան միւս գործօնանդամները՝ իր գոհունակութիւնն ու զնուհատումը յայտնեց Միթարեանց վարժարանին ցոյց տուած ուսումնական և լեզուագիտական յառաջդիմութեանը համար, սիրալիր խօսքերով : Յետոյ, Կ. — Պատրիարքն ու Դեսպանը՝ իրենց հետեւորդներով, հրաւիրուեցան հիւրանոց ուր մեծարանքներ ընծայուեցան : Նոյնպէս ուրիշ ծանօթ անձնաւորութեանց, մինչ հանդիսականներու ստուար բազմութիւնը պարտէզին հովանուտ ծառաստաններուն մէջ քիչ մը զովանալով՝ հեռզհեռէ կը մեկնէր գոհունակ տպաւորութեան մը տակ :

ԿրթԱԿԱՆ հանդէսներու և ուսանողական յաջողութեանց այս եղանակին մէջ, մասնաւոր հաճոյքով մըն է որ կը ծանուցանենք թէ գրագէտ—փաստաբան Գր. Զօհրապ էֆ. ի դեռափի որդին, Լէոն Զօհրապ, որ մայրաքաղաքիս գերմանական վարժարանին շրջանը յաջողապէս աւարտելէն ետքը՝ անցեալ տարի Եւրոպա ուղեւորած էր, ժընէվի «Առեւտրական Բարձրագոյն Վարժարանին» դասնթացքներուն հետեւելու, առաջին փայլուն տարեշրջան մը բոլորելով՝ Կ. Պոլիս եկած է ամառնային արձակուրդն իր ծնողաց ջով անցունելու : Պ. Լէոն Զօհրապ կանխահաս ուշիտութեամբ ու գիտական մտքով մը օժտուած համակրելի պատանի մըն է որ գեղեցիկ ապագայ մը կը խոստանայ :

ՍՏԱՅԱՆՔ երկու նոր հյատարակութիւններ. մէկը Իգմիրէն, Կասախեզգ Մոլիեռի, թարգմանութիւն Մեսրոպ էֆ. Նուպարեանի. ստուար հատոր մըն է որ կը պարունակէ ֆրանսացի հեղինակին թատերախաղերէն ու թիւն թարգմանութիւնը, Միւս սիրատարակութիւնն է Ատաբաղարի Հայուհեաց վարժարանի Յայտագիրը, իր հաստատման 20րդ տարեդարձին առթիւ :

ՄԽԻԹԱՐԵԱՆՅ Գատրգիւղի (Մօտա) վարժարանին ամսվերջի և վկայականներու բաշխման հանդէսը կատարուեցաւ անցիալ կիրակի, երկսեռ հրաւիրեալներու խուռն բաղմութեան մը ներկայութեամբ որոնց մէջ կը նշմարուէին, աշակերտաց ծնողքներէն զատ, շատ մը ծանօթ անձնաւորութիւններ, ուսուցչական և գրական դասէն: Այս կրթական հանդէսին կը նախագահէր Սեբաստիոյ Հայ Հռոմէականաց առաջնորդ Տ. Սահակ արքեպիսկ. Հաճեան, իր շուրջն ունենալով իտալական դեր-հիւպատոս Պ. Պիանքի Բրօչէ ու Գ. Թարգմանը, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Բանթարեան, Գատրգիւղի յոյս մտորապօլտին ներկայացուցիչը, Ռէթէոս էֆ. Պէրպէրեան և այլն:

Հանդէսն սկսաւ Կայս. Համիտիէ քայլերգով որուն յոսնկայս ունկնդրեցին ու ծափահարեցին ներկաները: Յետոյ նուազուեցաւ իտալական քայլերգը:

Այս տարուան շրջանաւարտներէն Պ. Ա. Գրիգորեան թուրքերէն լեզուով բարեմաղթական Ուղերձ մը կարդաց, Վեհ. Կայսեր ձօնուած, զոր խմբագրած էր Ստեփան էֆ. Կուրաիկեան, վարժարանին օսմաներէնի ուսուցիչը: Յետոյ, իրենց աւարտական ճառերը կարդացին վեց շրջանաւարտները՝ հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, իտալերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներով, որոնց ամէնուն մէջ ալ ի յայտ կուգար իրենց երախտագրիտական զգացումը հանդէպ իրենց Տնօրէնին՝ Հ. Յովհաննէս Վրդ. Թորոսեանի և ուսուցչական մարմինին: Իւրաքանչիւր ճառախօսութենէ վերջ ախորժալուր եղանակներ կը նուագէր աշակերտներուն փողերախումբը (fanfare) ջութակի և դաշնակի ընկերակցութեամբ:

Իտալերէն լեզուով զաւեշտէ մը ետք՝ աշակերտները ներկայացուցին նաև թուրքերէն լեզուով զաւեշտ մը, երկուքն ալ շատ յաջող ու զբօսալի: Երկրորդը հեղինակած էր Կուրաիկեան էֆ.:

Վարժարանին տեսուչ Տ. Թորոսեան վրդ. ընթացաւարտներուն բաշխեց վկայականները, ինչպէս նաև իւրաքանչիւր կարգի յաջող ու-

սանողներուն՝ մրցանակներ ու միտախներ: Ապա, նախագահ Հաճեան Գերապայծառ յորդորական մը ուղղեց ուսանողներուն, պատուաւոր քաղաքացիներ ըլլալու պայմանները բացատրելով:

Հանդէսը փակուեցաւ ուսանողական երաժշտախումբին նուագած սիրուն մէկ հատուածովը, որմէ ետք՝ ներկայ ծանօթ անձնաւորութիւններն հրաւիրուեցան վարժարանին վերնայարկի ծովահայեաց սրահը ուր պատուասիրուեցան, միեւնոյն ժամանակ տեղեկութիւններ ստանալով վարժարանին կազմակերպութեան և վերջին տարեշրջանի մէջ ըրած յառաջդիմութեանց վրայ: Այս առթիւ, շնորհաւորութիւններ ուղղեցին Հ. Յովհաննէս վրդ. Թորոսեանի՝ հմուտ և ձեռնհաս տեսիչ, և իր աջակիցներուն՝ Հ. Հացունիի և Հ. Տայեցիի, Մխիթարեան վարժարանին յաջող և արդիւնաւոր շրջան մը եւս բոլորելուն առթիւ:

Տեսչութիւնը մտադիր է բարձրագոյն դասընթացք մը հաստատել՝ յառաջիկայ շրջանին: Այս տարուան աշակերտաց թիւն է 140, որոնց 80ը գիշերօթիկ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ տարեկան հրապարակային քննութիւնները սկսան այս երեքշաբթի և կը շարունակուին մինչև յառաջիկայ հինգշաբթի, ամէն օր: Բննութիւնները կը սկսին առաւօտուն ժամը Չին եւ կը տեւին Տու կէս, միջօրէնց ետքն ալ ժամ 7է մինչև իրիկուն: Ի տես դրուած են մըրցական գրաւոր փորձեր, դժադրութիւնք և գեղագրական աշխատութիւնք: Վարժարանին Հիմնադիր-Տնօրէնը կը հրաւիրէ ներկայ ըլլալ քննութեանց, կրթութեան և վարժարանի բարեկամները, եկեղեցական թէ աշխարհական:

Հաճոյքով կը ծանուցանենք թէ Սուրհռնդակ օրաթերթը՝ երկու շաբթուան դադարումէ մը ետքը՝ երեքշաբթի առաւօտէն վերսկսաւ հրատարակուիլ, բարեհաճ արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏԻՐ ԵՒ ՏՃՕՐԷԿ—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԳԻ ՄԱՍԻՍ
Տպագրութիւն ԱՐԵՆՆԵԿ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ
 Կը գործէ ուղղակի Երանս. կառա-
 վարութեան հսկողութեան ներքե
 Ընթացիկ ապահովք. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
 Իրամագրութիւն եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
 Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
 ԱՐԱՄ Ս. ԳԱԼՅԱՆՆ

Պոլիս, Հանօթալո խան Եօ. 53
 Գաւառները պատուաւոր գործակալներ կը
 փնտռուին: 17-50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԷՐԵԱՆ

Պոլիս, Մարբուհարար. Պարնարան խան
 Թիւ 26

Այլէն կարգի դասեր կը ստանանք եւ
 խնդրոյ առարկայ եղած գործերու համար
 թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
 բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
 կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
 դասերու եւ առեւտրական ու սովորական
 պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
 Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձրիաւ
 բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կար-
 ծիք կը յայտնէ:

Օտմ. անօճիմ ընկերութեանց ղեկավարու
 ժողովոց մէջ բաժնետէրերը առանց վարձի
 կը ներհաւանէ:

Ապահովագրական գործառնութիւններու
 եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
 ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
 տեղեկութիւնները ձրիաբար կուտայ, եւ կը
 յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կար-
 ռուր եղած տեղեկութիւնները իրմէ չստաց-
 ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
 Ապահովագրական վստասց հասուցման գու-
 մարներու եւ փոխարժէքներու դանձուր
 եւս կը ստանանք:

Իսկ վարձքի մասին դիւրութիւն եւ ա-
 ժանութիւն կ'ընծայէ: 6-40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԲԱ, ՄԵՃ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսիին դէմ
 Գե. Եե. Շք. օրերը առաւօտեան կանու-
 խեկն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
 Բե. Գե. Ուր. օրերը 6եկն մինչեւ 11 1/2
 Վիրտի օրերը ժամադրութեամբ 5-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՒՏՈՆ 1782 ԻՆ

ԿԵ ԳՈՐԾԷ Ի ՓՈՂԻԹ 1869ԻՆ Ի ՎԵՐ
 ԸՆԴԼ. ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
 Իրամագրութիւն պահեստի դրամ
 Անդլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս օսոկ հրդեհի դէմ Ապահով-
 վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
 իր պատուաւորութեամբ եւ վստասց մէջ
 իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
 կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ եւ
 շարժուն ստացուածք, յոյժ նպատաւոր
 պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
 ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՉԱԿԱՆ
 ՀԱՏՈՒՅՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Յարգ վճա-
 րած է առաւել քան 27,000,000 ոսկլ.
 օսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
 աոց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
 Վիքրայիս խան, Պանֆ Օրօմանի ֆոյ
 Ղալաքիս:

Փօիս դործակալք Պոլիս
 ԲՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ձիվԱՆ ԹԷՔԷԵԱՆ
 Էմիկն պիլ խան Յնգլիտան խան
 Չնիլ իրօգրու
 Ա. ԵՆՔՍԷՐՃԵԱՆ

7-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
 ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Բ Գ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաքառիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ ան անձինք, որ շահաքառիներու բարգման (accumulation d'es bénéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՄԱԿԱՐ դուրեանք գործող ընկերութեանց կ'ապահովագրագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՒՆԵՆՍԻՍԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասսաթ Բաքրեք Օլլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի Վ.Ի.Ե.Ն.Ս.)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընգրկմ հրդեհի եւ ծովային աւերակներու (Ի ՄԱՏՐԻՏ)


Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունն է Ի Կ. Պոլիս, Բուքի Լիօնի

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրեհնեակ, Պոլիս, Ալեպիայի խան,



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՄԱԿԱՆ
ՄԱՍՆՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԼԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր իսան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՒՏԱՐ | | Չարչը Պոյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարելաբար երաւարտութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆալաֆետներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

01-10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գրաստանին Տէր-Մինասեան գրաստանը եւ մայրաքաղաքի միւս հայ գրավաճառներուն քով հասնը	հասնը	դր.	Արուարձանին տղան	3	15
Կարմիր մարդոց երգումը	2	10	Հանրակառքին ոճիրը	1	5
Ընտանեզուրկ	2	15	Սկզբունք Բող. Տնեսութեան	1	4
Փարիզի ամուսնութիւնները	1	2	Ընտանեկան գաղափարներ	3	15
Թափառական Հրեայ	4	50			4-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱՍՈՒՍՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵԻԿ ՎԱՃՅԱՌՈՂՆԵՐ

Գոհարեղեցներու, ամեն թեսակ կահ կարտիներու եւ ամենեւն անոսանել հազուսներու, ելն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զառ՝ կրնորու եւ այրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՉԳՆՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, փիսեղներ եւ այլն.) ճոխ մթերոնաց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գրինեղով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հոճին դիմել վերոյիշեալ վաճառատունները, ուրկէ անառարակոյս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարիւրէն 5 զեղչ:
3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց ա՛յլաս մնացած ըլլած՝ հարիւրին 10 զեղչով ետ կառնուին: Իսկ ապառիկ ծախուած եւ ա՛յլաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով ետ կառնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

Յ. Գ. Շարձական վճարմանց համար հաւարիչներ ընդմիջտ պատրաստ են:
ՄԵՍ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՒՍ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈՒԽՍ

ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս. Ուլքազով արտօնուած
Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԵՂԷՒ, ՓՈՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՂԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՂԵՆԱՌՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՄ, րուելուն դէմ:

Ընկերութեան դրամազուրկը, մարողապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	142,585,000	»
Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամազուրկ եւ մնասուց հատուցում	314,768,000	»
1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ առկոս	56,585,800	»

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյլոտա, Ղալաթիա,